«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/18

ք. Երևան «19» ապրիլ 2021թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Արամ Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մեքենա-մեխանիզմների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից

ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 7 500 000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

Ծառայությունների դեպքում, մատուցված Ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն Պայմանագրով սահմանված առանձին տեսակի Ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված Ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված Ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և



կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում և (կամ) այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող

պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է 235 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց 31
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 00873228
Գլխավոր տնօրեն	Տնօրեն
_____ Հ. Հարությունյան	_____ Ա. Գևորգյան

Հավելված N 1
« 19 » 04 2021թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀՇՁԲ-21/18» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մեքենա-մեխանիզմների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄ դասակարգմա ն (CPV)	Անվանումը	Տեխնի-կական բնութա-գիրը	Չափ-ման միա-վորը	Մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ	Ընդհա նուր անա-կը	մատուցման	
							հասցեն	ժամկետը
1	50111170/1	Բեռնատար,Բրիգադայի ն հատուկ Գազ – 66 Գազ – 53 սազ Գազ – 3307 ԿՀ Գազ - 530112	Ներկայացված է հավելված 1.1- ով	դրամ	25 000 000	1	ք.Երևան Զ.Անդրանիկի 1, ք.Գյումրի Ղարսի խճուղի 27/1, ք.Վանաձոր Թևոսյան 2, ք.Սևան Էներգետիկներ ի 4, ք.Կապան Գործարանայի ն 15, ք.Գորիս Երևանյան խճուղի 1	Պայմանա-գիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 365 օրացուցայի ն օր:
3	50111170/3	Կամազ – 65117, Կամազ – 5328 ՄՀ, Կամազ – 5328 A1, Կամազ – KS-55713-1B Ձիլ – 133 ԿՀ	Ներկայացված է հավելված 1.2- ով	դրամ	101 220 000	1	ք.Երևան Զ.Անդրանիկի 1, ք.Գյումրի Ղարսի խճուղի 27/1, ք.Վանաձոր Թևոսյան 2, ք.Սևան Էներգետիկներ ի 4, ք.Կապան Գործարանայի ն 15, ք.Գորիս Երևանյան խճուղի 1	

*Տեխնիկական սպասարկման կայանը պետք է ունենա մեքենա-մեխանիզմների արատաորոշման, ընթացքային մասի, թափքի և շարժիչի վերանորոգման, անիվների մոնտաժման և անվաբացքի կարգավորման, առանձնացված տեղամասեր համապատասխան սարքավորումներով, ամբարձիչներով և դիտափոսով:

*SU կայանի տեխնիկական անձնակազմը պետք է համալրված լինեն մեքենա-մեխանիզմների արատաորոշման տեխ.սպասարկման և նորոգման աշխատանքների կատարման համար մասնագիտացված աշխատակիցներով այդ թվում շարժիչագործով: ավտոէլեկտրիկով. անիվների մոնտաժման և անվաբացքի կարգավորման առանձնացված մասնագետներով:

*Մեքենա-մեխանիզմների վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների ժամանակ պետք է օգտագործվի միայն գործարանային արտադրության նոր պահեստամասեր:

*Մեքենա-մեխանիզմի անսարքության ժամանակ նրա ինքնագնաց տեղափոխման անհնարինության դեպքում, նրա տեղափոխումը իրականացվում է կայանի ուժերով: Ընդորում, Երևանի վարչական տարածքում, տեղափոխումը իրականացվում է անսարքության մասին ծանուցումը / գրավոր կամ բանավոր /ստանալուց հետո 2 ժամվա ընթացքում, իսկ հանրապետության մարզերում՝ ծանուցումը ստանալուց 24 ժամվա ընթացքում:

*Մատուցված ծառայության դիմաց վճարումները կիրականացվեն Հանձնման-Ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

*Բոլոր չափաբաժինների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում ծառայությունը ընդունելու օրվանից հաշված՝ ընթացիկ նորոգման աշխատանքների համար մինչև 6 ամիս, իսկ շարժիչի, փոխանցման տուփի, ավտոմատ փոխանցման տուփի և բաշխիչ տուփի հիմնական նորոգման աշխատանքների համար՝երկու /2 / տարի ժամկետով:

*Երևան քաղաքում՝ Զ.Անդրանիկ 1, իսկ մարզերում՝ ըստ մասնաճյուղերի տեղաբաշխման հասցեների

*Ըստ ներկայացված գրավոր կամ բանավոր հայտերի՝ ընթացիք նորոգման աշխատանքների համար՝4 (չորս) աշխատանքային օրվա ընթացքում,իսկ շարժիչի, փոխանցման տուփի, ավտոմատ փոխանցման տուփի և բաշխիչ տուփի հիմնական նորոգման աշխատանքների համար՝ 11(տասնմեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

*Տեխնիկական սպասարկման կայանը պետք է համալրված լինի ԲՎՃՄ-ի կարգավորման ստենդով, հիդրավլիկի մամլիչով և ավտոբեռնիչով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/6
ՀՀ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն՝

Ա. Հարությունյան
/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց 31
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228
Տնօրեն

Ս. Գալստյան
(ստորագրություն)

Հավելված N 1.1
«19» 04 2021թ. կնքված
«ԲԷՅ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով Պայմանագրի

ԳԱԶ-530112, ԳԱԶ-3308/3307КС/33081 /ԳԱԶ 53 սագ/ԵՎՐՈ/ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) նորոգման աշխատանքների և պահեստամասերի անվանացանկը

Հ/հ	Ծառայության անվանումը	Չ/մ	Միավորի գինը ՀՀ դրամ
	I ՇԱՐԺԻՉ ԳԱԶ-53/66		
1	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	42400
2	Շարժիչի քանդում և արատավորում	հատ	17000
3	Շարժիչի բլոկի մաքրում	հատ	12000
4	Շարժիչի բլոկի ներկում	հատ	3000
5	Շարժիչի /առանց բլոկի/ մասերի մաքրում	հատ	10600
6	Շարժիչի հավաքում	հատ	56000
7	Շարժիչի 1 հատ գլանի հղկում	հատ	3000
8	Շարժիչի 1 հատ գլանի ողորկում	հատ	500
9	Շարժիչի 1 հատ գլանի ստուգում	հատ	500
10	Շարժիչի 1 հատ գլխիկի նորոգում	հատ	5000
11	Շարժիչի 1 հատ գլխիկի հղկում	հատ	3000
12	Շարժիչի յուղի պոմպի ստենդավորում	հատ	2000
13	Շարժիչի յուղի պոմպի վերանորոգում	հատ	7500
14	Շարժիչի ծնկաձև լիսեռի հղկում	հատ	15900
15	Շարժիչի ծնկաձև լիսեռի ողորկում	հատ	2650
16	Շարժիչի ծնկաձև լիսեռի ստուգում	հատ	1500
17	Թափանիվի հանում և տեղադրում	հատ	1600
18	Թափանիվի օղագոտու փոխարինում	հատ	2200
19	Մեկնարկային ջեռուցիչ հանում և տեղադրում	հատ	1600
20	Մեկնարկային ջեռուցիչ վերանորոգում	հատ	2000
21	Շարժիչի կախոցի հանում և տեղադրում	հատ	2650
22	Շարժիչի փորձարկում	հատ	31800
23	**II ՇԱՐԺԻՉ ԳԱԶ-3307/530112/**		
24	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	47700
25	Շարժիչի քանդում և արատավորում	հատ	19500
26	Շարժիչի բլոկի մաքրում	հատ	14500

27	Շարժիչի բլոկի ներկում	հատ	4500
28	Շարժիչի /առանց բլոկի/ մասերի մաքրում	հատ	10600
29	Շարժիչի հավաքում	հատ	72500
30	Շարժիչի 1 հատ գլանի հղկում	հատ	3500
31	Շարժիչի 1 հատ գլանի ողորկում	հատ	500
32	Շարժիչի 1 հատ գլանի ստուգում	հատ	500
33	Շարժիչի 1 հատ գլխիկի նորոգում	հատ	5300
34	Շարժիչի 1 հատ գլխիկի հղկում	հատ	4300
35	Շարժիչի յուղի պոմպի ստենդավորում	հատ	2650
36	Շարժիչի յուղի պոմպի վերանորոգում	հատ	8500
37	Շարժիչի ծնկաձև լիսեռի հղկում	հատ	19400
38	Շարժիչի ծնկաձև լիսեռի ողորկում	հատ	2650
39	Շարժիչի ծնկաձև լիսեռի ստուգում	հատ	1300
40	Թափանիվի հանում և տեղադրում	հատ	2200
41	Թափանիվի օղագոտու փոխարինում	հատ	2500
42	Մեկնարկային ջեռուցիչ հանում և տեղադրում	հատ	2000
43	Մեկնարկային ջեռուցիչ վերանորոգում	հատ	2400
44	Շարժիչի կախոցի հանում և տեղադրում	հատ	3300
45	Շարժիչի փորձարկում	հատ	33000
46	**III Յուղի ռադյատոր,յուղի զտիչ**		
47	Յուղի ռադյատորի հանում և տեղադրում	հատ	4000
48	Յուղի զտիչի հանում և տեղադրում	հատ	1500
49	Յուղի ռադյատորի 1 հատ կալունակի հանում և տեղադրում	հատ	1500
50	Յուղի ռադյատորի փականի հանում և տեղադրում	հատ	1000
51	Յուղի ռադյատորի փականի վերանորոգում	հատ	500
52	Յուղի ռադյատորի ճկափող հանում և տեղադրում	հատ	1500
53	Յուղի զտիչի էլեմենտների փոխարինում	հատ	1500
54	**IV. Սնուցման համակարգ**		
55	Վառելիքի 1 հատ բաքի հանում և տեղադրում	հատ	3300
56	1 հատ վառելիքի բաքի նորոգում, մաքրում և ներկում	հատ	6000
57	Վառելիքի խողովակալարերի հանում և տեղադրում	հատ	5000
58	Վառելիքի բաքի 1 հատ անուրի փոխարինում	հատ	1500
59	Վառելիքի բաքի 1 հատ կալունակի փոխարինում	հատ	1400
60	Վառելիքի բաքի 1 հատ կափարիչի փոխարինում	հատ	500
61	Վառելիքի բաքի փականի փոխարինում	հատ	1600
62	Վառելիքի կենտրոնական փականի փոխարինում	հատ	1200
63	1 հատ օդի խողովակի հանում և տեղադրում	հատ	1800
64	1 հատ վառելիքի խողովակի հանում և տեղադրում	հատ	1800
65	Վառելիքի բաքի օդի փական հանում և տեղադրում	հատ	1500
66	1 հատ խողովակապտուկ փոխարինում	հատ	1000
67	Նախամաքրման վառելիքի պարզարանի հանում և տեղադրում	հատ	1500

68	Նախամաքրման վառելիքի պարզարանի էլեմենտի փոխարինում	հատ	1000
69	Վերջնամաքրման վառելիքի զտիչի հանում և տեղադրում	հատ	1000
70	Վերջնամաքրման վառելիքի զտիչի 1 հատ էլեմենտի փոխարինում,	հատ	1000
71	1 հատ եռաբաշխիկի հանում և տեղադրում	հատ	1000
72	1 հատ ծորակի հանում և տեղադրում	հատ	1000
73	ԲՃՎՄ-ի հանում և տեղադրում	հատ	7000
74	ԲՃՎՄ-ի ստենդային ստուգում	հատ	3500
75	ԲՃՎՄ-ի քանդում, հանգույցների, դետալների մաքրում, լվացում և սեխմված օդով փչում և հավաքում	հատ	3500
76	ԲՃՎՄ-ի ստենդային կարգավորում	հատ	5300
77	ԲՃՎՄ-ի ընթացիկ նորոգում	հատ	10600
78	ԲՃՎՄ-ի միջին նորոգում	հատ	13000
79	ԲՃՎՄ-ի հիմնական նորոգում	հատ	17000
80	Բոցամուղի հանում և տեղադրում /1 հատ/	հատ	1500
81	Վառելիքի ձեռքի մղիչ պոմպի հանում և տեղադրում	հատ	1500
82	Վառելիքի ձեռքի մղիչ պոմպի վերանորոգում	հատ	1500
83	Արագարարի ոտնակի հանում և տեղադրում	հատ	1500
84	Ոտնակի կոնկակալի փոխարինում	հատ	1500
85	Արագարարի ոտնակի ձգաձողի հանում և տեղադրում	հատ	1400
86	Արագարարի միջանկյալ ձգաձողի հանում և տեղադրում	հատ	1500
87	Դրոսելային սահափականի ձգաձողի և լծակների հանում և տեղադրում	հատ	2000
88	Դրոսելային սահափականի ձեռքի ղեկավարման ձգաձող հանում և տեղադրում	հատ	2000
89	Կարբյուրատորի հանում և տեղադրում	հատ	2400
90	Կարբյուրատորի վերանորոգում	հատ	5300
91	Կարբյուրատորի 1 հատ ճկափողի փոխարինում	հատ	1300
92	Բենզինի պոմպի հանում և տեղադրում	հատ	1300
93	Բենզինի պոմպի վերանորոգման ծառայություն	հատ	1800
94	Օդի զտիչի էլեմենտի փոխարինում	հատ	1500
95	Օդի զտիչի կորպուսի /կափարիչով/ հանում և տեղադրում	հատ	1500
96	Օդի զտիչի կորպուսի հենակի փոխարինում	հատ	1300
97	Օդի զտիչի ռետինե խողովակի փոխարինում	հատ	1300
98	**V Գազի արտանետման համակարգ**	հատ	
99	Խլացուցիչի հանում և տեղադրում	հատ	3000
100	Խլացուցիչի նորոգում	հատ	2500
101	Խլացուցիչի 1 հատ ընդունման խողովակի հանում և տեղադրում	հատ	1500
102	Խլացուցիչի 1 հատ խամութի փոխարինում	հատ	1500
103	Խլացուցիչի մաքրման և ներկման ծառայություն	հատ	4000
104	**VI Հովացման համակարգ**	հատ	



105	Ռադիատորի հանում և տեղադրում	հատ	4000
106	Ռադիատորի վերանորոգման ծառայություն	հատ	15000
107	Ռադիատորի կախոցի շրջանակի հանում և տեղադրում	հատ	2500
108	Ռադիատորի կախոցի ներքևի վահանի հանում և տեղադրում	հատ	2000
109	Ռադիատորի հովացման գոգնոցի հանում և տեղադրում	հատ	2400
110	Թերմոստատի հանում և տեղադրում	հատ	2000
111	Ռադիատորի շերտափեղկի հանում և տեղադրում	հատ	2300
112	Ռադիատորի շերտափեղկի վերանորոգում	հատ	4300
113	Շերտափեղկի կառավարման ձգաձողի հանում և տեղադրում	հատ	1800
114	Ընդարձակման բաքի հանում և տեղադրում	հատ	1500
115	Ընդարձակման բաքի 1 հատ խողովակի փոխարինում	հատ	1000
116	Ռադյատորի ծորակի փոխարինում	հատ	1400
117	Ռադիատորի խցանի փոխարինում	հատ	500
118	Շարժիչի ջրի պոմպի վերանորոգման ծառայություն	հատ	3000
119	Շարժիչի ջրի պոմպի հանում և տեղադրում	հատ	3000
120	Օդափոխիչի թևանիվի հանում և տեղադրում	հատ	1600
121	Օդափոխիչի կցաշուրթի փոխարինում	հատ	2800
122	Ռադիատորի կախոցի 1 հատ բարձակի հանում և տեղադրում	հատ	1700
123	Հովացման 1 հատ խողովակների փոխարինում	հատ	1500
124	Հովացման խողովակների 1 հատ խամութի փոխարինում	հատ	500
125	**VII Կցորդում**		
126	Կցորդիչի հանման և տեղադրման ծառայություն /հանված փոխանցման տուփի/	հատ	4000
127	Կցորդիչի միացման գլխավոր գլանի փոխարինում	հատ	2200
128	Կցորդիչի միացման գլխավոր գլանի վերանորոգման ծառայություն	հատ	2000
129	Կցորդիչի միացման գլխավոր գլանի ճկափողի փոխարինում	հատ	1500
130	Կցորդիչի ոտնակի փոխարինում	հատ	1500
131	Կցորդիչի ոտնակի սռնիի բարձակի փոխարինում	հատ	500
132	Տարվող սկավառակի փոխարինում	հատ	1700
133	Տարվող սկավառակի գամում	հատ	2200
134	Տանող սկավառակի փոխարինում	հատ	2200
135	Սեղմիչ սկավառակի փոխարինում	հատ	2000
136	Սեղմիչ սկավառակի վերանորոգման ծառայություն	հատ	2300
137	Կցորդման քարտերի հանում և տեղադրում	հատ	1600
138	Կցորդման բանվորական գլանի փոխարինում	հատ	1600
139	Կցորդման բանվորական գլանի վերանորոգում	հատ	1500
140	Կցորդման երկժանիի հանում և տեղադրում	հատ	1500
141	Կցորդիչի առանցքակալի հանում և տեղադրում	հատ	1500
142	Կցորդիչի առանցքակալի հենակի փոխարինում	հատ	1500
143	Կցորդիչի քսայուղի ճկափողի փոխարինում	հատ	1500
144	Կցորդիչի երկաթակապի փոխարինում	հատ	1000



145	**VIII Փոխանցման տուփ**		
146	Փոխանցման տուփի հանում և տեղադրում	հատ	14000
147	Փոխանցման տուփի քանդում և արատավորում	հատ	6000
148	Փոխանցման տուփի մասերի մաքրում	հատ	3300
149	Փոխանցման տուփի հավաքում	հատ	17000
150	Փոխանցման տուփի մաքրում և ներկում	հատ	3200
151	**XI Բաշխիչ-բաժանիչ տուփ**		
152	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	հատ	13000
153	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում	հատ	5300
154	Բաշխիչ տուփի հավաքում	հատ	15000
155	Բաշխիչ տուփի մաքրում և ներկում	հատ	3300
156	**X Կարդանային լիսեռներ**		
157	Հետևի կամրջակի կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	3700
158	1 հատ երկժանի-կցաշուրթի փոխարինում	հատ	1400
159	1 հատ խաչարդի փոխարինում	հատ	1600
160	Հիմնական կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	3500
161	Առջևի կամրջակի կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	3500
162	1 հատ կարդանային լիսեռի մաքրում և ներկում	հատ	2650
163	**XI Առջևի կամրջակ**		
164	Առջևի կամրջակի հանում և տեղադրում	հատ	30000
165	Առջևի կամրջակի քանդման և արատավորման ծառայություն	հատ	13000
166	Առջևի կամրջակի քարտերի մաքրում և ներկում	հատ	12000
167	Առջևի կամրջակի հավաքում	հատ	26500
168	Առջևի կամրջակի պտույտափոխանցիչ /ռեդուկտորի/ հանում և տեղադրում	հատ	7000
169	Առջևի կամրջակի պտույտափոխանցիչ /ռեդուկտորի/ քանդուման և արատավորման ծառայություն	հատ	6000
170	Առջևի կամրջակի պտույտափոխանցիչ /ռեդուկտորի/ հավաքում	հատ	10600
171	Առջևի կամրջակի 1 հատ արտաքին հոդակապի բռունցքի հանում և տեղադրում	հատ	8500
172	Առջևի կամրջակի 1 հատ /աջ կամ ձախ/ ներքին հոդակապի բռունցքի հանում և տեղադրում	հատ	8500
173	1 հատ Պտույտի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում	հատ	6500
174	Առջևի կամրջակի 1 հատ /աջ կամ ձախ/ պտույտի բռունցքի իրանի հանում և տեղադրում	հատ	6500
175	Առջևի կամրջակի 1 հատ /աջ կամ ձախ/ պտույտի բռունցքի դարձակի հանում և տեղադրում	հատ	5000
176	Առջևի կամրջակի 1 հատ կիսասռնիի հանում տեղադրում	հատ	7950
177	Դիֆերենցյալ քանդում և հավաքում	հատ	12000
178	1 հատ անվակունդի քանդում և հավաքում	հատ	3000
179	**XII Հետևի կամրջակ**		

180	Հետևի կամրջակի հանում և տեղադրում	հատ	30000
181	Հետևի կամրջակի քանդում և արատավորում	հատ	12000
182	Հետևի կամրջակի քարտերի մաքրում և ներկում	հատ	12000
183	Հետևի կամրջակի հավաքում	հատ	23500
184	Հետևի կամրջակի պտույտափոխանցիչ /ռեդուկտորի/ հանում տեղադրում	հատ	6500
185	Հետևի կամրջակի պտույտափոխանցիչ /ռեդուկտորի/ քանդման և արատավորման ծառայություն	հատ	6500
186	Հետևի կամրջակի պտույտափոխանցիչ /ռեդուկտորի/ հավաքում	հատ	10600
187	Հետևի կամրջակի 1 հատ կիսասռնիի հանում տեղադրում	հատ	2650
188	Դիֆերենցյալ քանդում և հավաքում	հատ	12000
189	1 հատ անվակունդի քանդում և հավաքում	հատ	2650
190	**XIII Շրջանակ**		
191	Շրջանակի հանում և տեղադրում	հատ	58300
192	Շրջանակի մաքրման և ներկման ծառայություն	հատ	26500
193	Առջևի թափարգելի հանում և տեղադրում	հատ	4000
194	Առջևի թափարգելի նորոգում	հատ	6500
195	Հետևի թափարգելի հանում և տեղադրում	հատ	2650
196	Հետևի թափարգելի նորոգում	հատ	2000
197	Քարշիչային սարքի հանում և տեղադրում	հատ	3400
198	Քարշիչային սարքի նորոգում	հատ	1800
199	Քարշակման կեռի հանում և տեղադրում	հատ	1400
200	Շարժիչի 1 հատ ցայտապաշտպանիչի հանում և տեղադրում	հատ	1600
201	**XIV Կախոց**		
202	**1 Առջևի և հետևի կախոցներ**		
203	Առջևի 1 հատ զսպանի հանում և տեղադրում	հատ	6500
204	Առջևի 1 հատ զսպանի քանդում և արատավորում	հատ	2000
205	Առջևի 1 հատ զսպանի մաքրում և ներկում	հատ	2400
206	Առջևի 1 հատ զսպանի հավաքում	հատ	2500
207	Առջևի կախոցի 1 հատ մեղմիչի հանում և տեղադրում	հատ	2000
208	Առջևի կափոցի 1 հատ մեղմիչի վերանորոգում	հատ	5300
209	Հետևի 1հատ զսպանի հանում և տեղադրում	հատ	6400
210	Հետևի 1հատ զսպանի քանդում և արատավորում	հատ	2000
211	Հետևի 1 հատ զսպանի մաքրում և ներկում	հատ	2300
212	Հետևի1 հատ զսպանի հավաքում	հատ	2500
213	Հետևի կախոցի 1 հատ մեղմիչի հանում և տեղադրում	հատ	2000
214	Հետևի կախոցի 1 հատ մեղմիչի վերանորոգում	հատ	5300
215	**XV Անիվներ և կունդեր**		
216	1 հատ անիվի հանում և տեղադրում	հատ	2650
217	1 հատ անիվի քանդում , հավաքում և տեղադրում	հատ	4000
218	1 հատ անիվի անվահեցի մաքրում և ներկում	հատ	2300
219	1 հատ արգելակման թմբուկի հանում և տեղադրում	հատ	2000



220	Անվակունդի 1 հատ առանցքակալի փոխարինում	հատ	2000
221	Անվակունդի 1 հատ մանեկի փոխարինում	հատ	1000
222	Անվակունդի 1 հատ խցուկի փոխարինում	հատ	1300
223	Օդի ծորակի հանում և տեղադրում	հատ	1500
224	Օդի ծորակի վերանորոգում	հատ	1000
225	1 հատ անվադողի վերանորոգում	հատ	1200
226	Դողի օդախցիկի վերանորոգում	հատ	1200
227	Պահեստային դողի բռնիչի քանդում, մաքրում, ներկում և հավաքում	հատ	8500
228	Պահեստային դողի բռնիչի վերանորոգում	հատ	4800
229	Ճնշման համակարգով դողերի պոմպման կառավարման փականի փոխարինում	հատ	2000
230	Ճնշման համակարգով դողերի պոմպման կառավարման փականի վերանորոգում	հատ	2650
231	1 հատ անվադողի օդի առբերման փականի փոխարինում	հատ	1300
232	1 հատ անվադողերին օդի առբերման փականի վերանորոգում	հատ	1000
233	Անվադողերի պոմպման համակարգի ուժային ագրեգատի հանում և տեղադրում /կոմպրեսոր/	հատ	4800
234	Անվադողերի պոմպման համակարգի ուժային ագրեգատի վերանորոգում	հատ	8500
235	Անվադողերի պոմպման համակարգի /ուժային ագրեգատի/ խողովակաշարի փոխարինում	հատ	6000
236	Անվադողերի պոմպման համակարգի 1 հատ խողովակի փոխարինում	հատ	1300
237	Անվադողերի պոմպման համակարգի 1 հատ անկյունակապի փոխարինում	հատ	1000
238	Անվադողերի պոմպման համակարգի 1 հատ խողովակապտուկի փոխարինում	հատ	1000
239	Անվադողերի պոմպման համակարգի 1 հատ ճկափողի փոխարինում	հատ	1200
240	Անվադողերի պոմպման համակարգի 1 հատ ագուցիկ մանեկի փոխարինում	հատ	1000
241	Անվադողերի պոմպման համակարգի 1 հատ կոնային կցորդիչի փոխարինում	հատ	1200
242	Անվադողերի պոմպման համակարգի 1 հատ նիպելի փոխարինում,	հատ	500
243	Անվադողերի պոմպման համակարգի 1 հատ եռաբաշխիկի փոխարինում	հատ	1000
244	1 հատ կալունակի փոխարինում	հատ	1000
245	**XVI Ղեկային համակարգ,ղեկային ձգաձողեր**		
246	Ղեկակառավարման հանում և տեղադրում	հատ	11800
247	Ղեկակառավարման համակարգի վերանորոգում	հատ	11500
248	Ղեկանիվի հանում և տեղադրում	հատ	2000
249	Ղեկասյունակ հանում և տեղադրում	հատ	2200
250	Ղեկասյունակ վերանորոգում	հատ	2300

251	Ձայնային ազդանշանի կոճակի քանդում և հավաքում	հատ	1000
252	Ղեկային համակարգի աշտարակի խողովակի հանում և տեղադրում	հատ	1400
253	Ղեկային համակարգի 1 հատ կարդանային լիսեռի երկժանիի փոախրինում	հատ	1400
254	Ղեկային համակարգի հիդրոուժեղարար պոմպի հանում և տեղադրում	հատ	4000
255	Ղեկային հիդրոուժեղարարի խողովակաշարի փոխարինում	հատ	3000
256	Ղեկային հիդրոուժեղարարի խողովակաշարի բարձր ճնշման ճկափողի փոխարինում	հատ	1500
257	Ղեկային հիդրոուժեղարարի խողովակաշարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	հատ	1200
258	Ղեկային հիդրոուժեղարարի խողովակաշարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	հատ	1500
259	Ղեկային հիդրոուժեղարարի խողովակաշարի ցածր ճնշման ճկափողի փոխարինում	հատ	1500
260	Ղեկային հիդրոուժեղարարի կառավարման փականի հանում և տեղադրում	հատ	1400
261	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	հատ	4500
262	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգում	հատ	5000
263	Ղեկային հիդրոուժեղարարի կառավարման փականի վերանորոգում	հատ	1500
264	Ղեկային համակարգի ղեկավարման փականի փոխարինում	հատ	2000
265	Ղեկային համակարգի ուժեղարար գլանի հանում և տեղադրում	հատ	2300
266	Ղեկային համակարգի ուժեղարար գլանի նորոգում	հատ	2500
267	Ղեկի երկայնակի ձգաձողի հանում և տեղադրում	հատ	3200
268	Ղեկի երկայնակի ձգաձողի վերանորոգում	հատ	1500
269	Ղեկի լայնակի ձգաձողի հանում և տեղադրում	հատ	2650
270	Ղեկի լայնակի ձգաձողի վերանորոգում	հատ	1500
271	Ղեկի լայնակի ձգաձողի1 հատ ծայրոցի վերանորոգում	հատ	1200
272	**XVII Արգելակներ**		
273	Կոմպրեսորի հանում և տեղադրում	հատ	4000
274	Կոմպրեսորի վերանորոգում	հատ	4500
275	Անիվի 1 հատ մակադրակի հանում և տեղադրում	հատ	2200
276	Առջևի արգելակի 1 հատ թուլացման բռունցքի հանում և տեղադրում	հատ	1500
277	Առջևի արգելակի 1 հատ կոճղակի հանում և տեղադրում	հատ	1200
278	Առջևի արգելակի 1 հատ բրոնզե օղակի հանում և տեղադրում	հատ	1000
279	Առջևի արգելակի 1 հատ ձգիչ զսպանի հանում և տեղադրում	հատ	1000
280	Հետևի արգելակի 1 հատ թուլացման բռունցքի հանում և տեղադրում	հատ	1000
281	Հետևի արգելակի 1 հատ վահանի հանում և տեղադրում	հատ	1000
282	Հետևի արգելակի 1 հատ ձգիչ զսպանի հանում և տեղադրում	հատ	1000
283	Արգելակի շարժաբերի արգելակի ոտնակի հանում և տեղադրում	հատ	1300
284	Արգելակի շարժաբերի ձգիչ զսպանի հանում և տեղադրում	հատ	1000

285	Օդի ճնշման կարգավորիչ փականի հանում և տեղադրում	հատ	1500
286	Օդի ճնշման կարգավորիչ փականի վերանորոգում	հատ	2300
287	1 հատ օդի բալոնի հանում և տեղադրում	հատ	2000
288	1 հատ օդի բալոնի ամրակապման խամութի հանում և տեղադրում	հատ	1500
289	Ստուգողական արտածման փականի հանում և տեղադրում	հատ	1500
290	Ստուգողական արտածման փականի վերանորոգում	հատ	1300
291	Արգելակման համակարգերի խողովակաշարի 1 հատ եռաբաշխիկի հանում և տեղադրում	հատ	1300
292	Արգելակման համակարգերի խողովակաշարի 1 հատ խողովակի հանում և տեղադրում	հատ	1300
293	Արգելակման համակարգերի խողովակաշարի 1 հատ խողովակապտուկի փոխարինում	հատ	1000
294	Կայանային արգելակի մեխանիզմի վերանորոգում	հատ	5300
295	Կայանային արգելակի մեխանիզմի հանում և տեղադրում	հատ	2650
296	Կայանային արգելակիի թմբուկի լծակի հանում և տեղադրում	հատ	1300
297	Կայանային արգելակիի թմբուկի հանում և տեղադրում	հատ	1500
298	Կայանային արգելակիի կոճղակի հանում և տեղադրում	հատ	1500
299	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	հատ	4000
300	Վակումային ուժեղարարի նորոգում	հատ	4000
301	Վակումային ուժեղարարի գլանի հանում և տեղադրում	հատ	1500
302	Վակումային ուժեղարարի գլանի վերանորոգում	հատ	1500
303	Հիդրովակումային ուժեղարարի կառավարման փականի հանում և տեղադրում	հատ	2200
304	Հիդրովակումային ուժեղարարի կառավարման փական վերանորոգում	հատ	1800
305	Արգելակման գլխավոր գլանի հանում և տեղադրում	հատ	4500
306	Արգելակման գլխավոր գլանի նորոգում	հատ	2500
307	Արգելակման բանվորական գլանի հանում և տեղադրում	հատ	1200
308	Արգելակման բանվորական գլանի նորոգում	հատ	1000
309	Արգելակման 1 հատ զսպանի փոխարինում	հատ	1000
310	Արգելակման 1 հատ ճկափողի փոխարինում	հատ	1200
311	Արգելակման ոտնակի բարձիկի փոխարինում	հատ	1000
312	Արգելակման ոտնակի հանում և տեղադրում	հատ	1500
313	**XVIII Էլեկտրոսարքավորանք**		
314	Գեներատորի հանում և տեղադրում	հատ	2500
315	Գեներատորի նորոգման ծառայություն	հատ	4800
316	Գեներատորի քանդում և արատավորում	հատ	1500
317	Գեներատորի հավաքում	հատ	3500
318	Գեներատորի լիցքավորման ռելեյի փոխարինում	հատ	1200
319	1 հատ կուտակիչ մարտկոցի հանում և տեղադրում	հատ	2500
320	Բնիկի կափարիչի հանում և տեղադրում	հատ	1500
321	Մասսայի անջատիչի փոխարինում	հատ	1300



322	Մեկնարկիչի հանում և տեղադրում	հատ	2650
323	Մեկնարկիչի նորոգման ծառայություն	հատ	2000
324	Մեկնարկիչի քանդում և արատավորում	հատ	1550
325	Մեկնարկիչի հավաքում	հատ	3000
326	Մեկնարկիչի շարժաբերի /բենդեքս/ փոխարինում	հատ	1500
327	Մեկնարկիչի ռելեյի փոխարինում	հատ	1200
328	1 հատ փոխարկիչի հանում և տեղադրում	հատ	1000
329	Փոխարկիչի վերանորոգում	հատ	1200
330	Անջատիչների վահանի հանում և տեղադրում	հատ	1500
331	Արգելակման ազդանշանի անջատիչի հանում և տեղադրում	հատ	1200
332	1 հատ էլեկտրական շղթայի ապահովիչի փոխարինում	հատ	1000
333	1 հատ էլեկտրահաղորդալարի միակցիչի փոխարինում	հատ	500
334	1 հատ էլեկտրաշարժիչի հանում և տեղադրում	հատ	1500
335	1 հատ էլեկտրաշարժիչի նորոգում	հատ	2300
336	1 հատ կողային լապտերի հանում և տեղադրում	հատ	1200
337	1 հատ առջևի լապտերի հանում և տեղադրում	հատ	1200
338	Ներքին լուսավորման լուսամփոփի հանում և տեղադրում	հատ	1000
339	Ծածկոցի տակի լամպի հանում և տեղադրում	հատ	1000
340	1 հատ հետևի լապտերի հանում և տեղադրում	հատ	1200
341	1 հատ հետին ընթացքի լապտերի հանում և տեղադրում	հատ	1000
342	Պետ համարանիշի լուսավորության լապտերի հանում և տեղադրում	հատ	1000
343	Լուսարձակի հանում և տեղադրում	հատ	1000
344	Լուսարձակի բարձակի հանում և տեղադրում	հատ	1000
345	Ջեռուցիչի էլեկտրասարքավորանքների նորոգում	հատ	4000
346	Ջեռուցիչի էլեկտրասարքավորանքների հանում և տեղադրում	հատ	2650
347	1 հատ ռելեյի փոխարինում	հատ	1000
348	Ամբողջ էլեկտրոլարերի հանում,նորոգում և տեղադրում	հատ	35000
349	Լապտերի 1 հատ փոքր լամպի փոխարինում	հատ	500
350	Լապտերի 1 հատ մեծ լամպի փոխարինում	հատ	500
351	Առջևի հաղորդալարերի փունջի նորոգում	հատ	8500
352	Հետևի /ձախ կամ աջ/ հաղորդալարերի փունջի վերանորոգում	հատ	6000
353	Լուսամփոփի հաղորդալարերի փունջի փոխարինում	հատ	2000
354	Հարթակի լուսաորության հաղորդալարերի փունջի փոխարինում	հատ	2000
355	Հետևի լապտերի հաղորդալարերի փունջի նորոգում	հատ	4000
356	Հետևի լապտերի հաղորդալարերի փունջի փոխարինում	հատ	2600
357	Վառոցքի 1 հատ մոմի փոխարինում	հատ	500
358	Ընդհատիչ բաշխիչի /տրամբյոր/ հանում և տեղադրում	հատ	3200
359	Ընդհատիչ բաշխիչի /տրամբյոր/ վերանորոգում	հատ	3200
360	Ինդուկցիոն կոճի փոխարինում	հատ	1200
361	Լարման կարգավորիչի հանում և տեղադրում	հատ	1300
362	Լարման կարգավորիչի վերանորոգում	հատ	1300



363	Վառոցքի մոմի լարերի փոխարինում	հատ	2000
364	Վարիատորի փոխարինում	հատ	1300
365	Կամուտատորի փոխարինում	հատ	1300
366	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	հատ	2400
367	Բռնկման կողպեքի նորոգում	հատ	1300
368	Արագաչափի ճոպանի հանում և տեղադրում	հատ	2000
369	Մարտկոցի 1 հատ մալուխի հանում և տեղադրում	հատ	1300
370	Կուտակիչ մարտկոցի ամրացման տեղանքի վերանորոգում	հատ	2000
371	**XIX Սարք**		
372	Սարքերի վահանի հանում և տեղադրում	հատ	3180
373	1 հատ ստուգողական լամպերի բլոկի փոխարինում	հատ	1500
374	1 հատ ցուցիչի /արագաչափ, կամ էլեկտրական տախոմետրի, կամ անվադողերի օդի ճնշման մանոմետրի, կամ օդի երկսլաք մանոմետրի/ փոխարինում	հատ	1300
375	1 հատ ցուցիչի /հեղուկի սառեցման ջերմաստիճանի ցուցիչի, կամ ամպերաչափի, կամ վառելիքի մակարդակի ցուցիչի, կամ յուղի ճնշման ցուցիչի/ փոխարինում	հատ	1300
376	Կարապիկի կառավարման անջատիչի հանում և տեղադրում	հատ	1200
377	Սարքերի վահանի լուսավորության անջատիչի հանում և տեղադրում	հատ	1200
378	**XX Խցիկ**		
379	Խցիկի հանում և տեղադրում	հատ	26500
380	Խցիկի քանդում, մաքրում, վերանորոգում և ներկում	հատ	174900
381	Խցիկի ներսի երեսաքաշում /այդ թվում նստարանների/	հատ	26500
382	Խցիկի հավասարակշռման մեխանիզմի 1 հատ ոլորալիսեռի փոխարինում	հատ	1500
383	Խցիկի հավասարակշռման մեխանիզմի 1 հատ բարձակի փոխարինում	հատ	1400
384	Խցիկի հետևի կախոցի փակիչի 1 հատ բարձակի /աջ կամ ձախ/ փոխարինում	հատ	1500
385	Խցիկի շրջող մեխանիզմի առջևի բարձակի փոխարինում	հատ	2500
386	Խցիկի շրջող մեխանիզմի հետևի բարձակի փոխարինում	հատ	2500
387	Խցիկի 1 հատ զսպանի հանում և տեղադրում	հատ	2650
388	Խցիկի 1 հատ զսպանի քանդում, մաքրում, ներկում և հավաքում	հատ	2650
389	Խցիկի փակիչ փականի հանում և տեղադրում	հատ	5000
390	Խցիկի փակիչ փականի նորոգում	հատ	2650
391	Խցիկի 1 հատ /աջ կամ ձախ/ փականի հանում և տեղադրում	հատ	2000
392	Խցիկի փականի 1 հատ /աջ կամ ձախ/ կոթի հանում և տեղադրում	հատ	1000
393	Խցիկի փականի 1 հատ /աջ կամ ձախ/ իրանի հանում և տեղադրում	հատ	1000
394	Խցիկի ամրակապման թամբի հանում և տեղադրում	հատ	12000
395	**XXI Քամու լուսամուտ**		
396	1 հատ քամու լուսամուտի հանում և տեղադրում	հատ	3300

397	Ապակեմաքրիչի իր շարժաբերով հանում և տեղադրում	հատ	2200
398	Ապակեմաքրիչի 1 հատ ձգաձողի փոխարինում	հատ	1000
399	Ապակեմաքրիչի 1 հատ խոզանակի փոխարինում	հատ	1000
400	Ապակեմաքրիչի էլեկտրոշարժիչի հանում և տեղադրում	հատ	2000
401	Ապակեմաքրիչի էլեկտրոշարժիչի նորոգում	հատ	2200
402	Քամու ապակիյի ջրի պոմպի նորոգում	հատ	1300
403	**XXII Խցիկի առաջք**		
404	Խցիկի առաջքի նորոգում	հատ	7500
405	Խցիկի առաջքի փոխարինում	հատ	4000
406	**XXIII Խցիկի կողամաս**		
407	1 հատ կողամասի /աջ կամ ձախ/ փոխարինում	հատ	6500
408	1 հատ պանելի /աջ կամ ձախ/ փոխարինում	հատ	3500
409	**XXIV Խցիկի հետև**		
410	Խցիկի հետևի փոխարինում	հատ	10000
411	Խցիկի հետևի վերևի պանելի փոխարինում	հատ	2650
412	Խցիկի հետևի ներքևի պանելի փոխարինում	հատ	2500
413	1 հատ հետևի լուսամուտի հանում և տեղադրում	հատ	2650
414	**XXV Խցիկի տանիք**		
415	Խցիկի տանիքի նորոգում	հատ	12000
416	Խցիկի տանիքի փոխարինում	հատ	6500
417	Խցիկի տանիքի կարկասի փոխարինում	հատ	4400
418	Խցիկի տանիքի պանելի փոխարինում	հատ	4000
419	**XXVI Խցիկի դուռ**		
420	Խցիկի 1 հատ /աջ կամ ձախ/ դռան հանում և տեղադրում	հատ	4000
421	Խցիկի դռան 1 հատ ծխնիի փոխարինում	հատ	1200
422	Խցիկի դռան 1 հատ /աջ կամ ձախ/ արտաքին պանելի փոխարինում	հատ	1200
423	Խցիկի դռան ներքին պանելի 1 հատ մտոցի կափարիչի հանում և տեղադրում	հատ	500
424	Խցիկի դռան 1 հատ իջուցիկ ապակիի հանում և տեղադրում	հատ	1200
425	Խցիկի դռան 1 հատ օդանցքի ապակիի հանում և տեղադրում	հատ	1200
426	Խցիկի դռան 1 հատ ապակեամբարձիչի հանում և տեղադրում	հատ	1200
427	Խցիկի դռան ապակեամբարձիչի 1 հատ բռնակի հանում և տեղադրում	հատ	1000
428	Խցիկի դռան 1 հատ ռեզինի հանում և տեղադրում	հատ	1000
429	Խցիկի դռան 1 հատ սահմանափակիչի լծակի հանում և տեղադրում	հատ	1000
430	**XXVII Խցիկի ջեռուցում և օդափոխություն**		
431	Խցիկի ջեռուցման ռադիատորի հանում և տեղադրում	հատ	2300
432	Խցիկի ջեռուցիչի ռադիատորի կիպարարի փոխարինում	հատ	1200
433	Խցիկի ջեռուցիչի 1 հատ բաշխիչի /աջ կամ ձախ/ փոխարինում	հատ	1200
434	Խցիկի ջեռուցիչի 1 հատ շրջափչման ծայրափողակի փոխարինում	հատ	1000
435	Խցիկի 1 հատ ջեռուցման բաշխիչի փոխարինում	հատ	1000
436	Խցիկի օդափոխիչի հանում և տեղադրում	հատ	2300



437	Խցիկի օդափոխիչի թևանիվի հանում և տեղադրում	հատ	1000
438	Խցիկի ջեռուցման համակարգի լծակի փոխարինում	հատ	1000
439	Խցիկի օդափոխիչի 1 հատ աշխատող օղակի փոխարինում	հատ	1000
440	Խցիկի օդափոխիչի 1 հատ կցաշուրթի փոխարինում	հատ	1000
441	Խցիկի ջեռուցիչի 1 հատ խողովակի փոխարինում	հատ	1000
442	**XXVIII Խցիկի պիտույքներ**		
443	1 հատ հետևի դիտահայելիի հանում և տեղադրում	հատ	1000
444	Հետևի դիտահեյելիի 1 հատ բարձակով բռնիչի հանում և տեղադրում	հատ	1000
445	Հետևի դիտահայելիի 1 հատ իրանի փոխարինում	հատ	1000
446	Խցիկի արևապաշտպանիչ 1 հատ հովհարի հանում և տեղադրում	հատ	1000
447	**XXIX Ավտոմեքենայի պահպանական հարդարանք**		
448	1 հատ ցեխի վահանակի հանում և տեղադրում	հատ	1000
449	1 հատ ցայտապաշտպանիչի հանում և տեղադրում	հատ	1000
450	1 հատ առջևի լրացուցիչ ոտնատեղի փոխարինում	հատ	1500
451	1 հատ հետևի լրացուցիչ ոտնատեղի փոխարինում	հատ	1300
452	**XXX Թափք**		
453	Թափքի հանում և տեղադրում	հատ	26500
